

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06

Վիճակագրության պետական խորհրդի նիստի

12.05.2010թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ջ.Միրզոյան (նախագահի խորհրդական), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Ս. Պողոսյան (իրավաբանական բաժնի պետ), Լ. Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Ա. Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Կ. Կույունջյան (մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ), Գ. Նշանյան (մարդահամարի պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` չորս հարց.

1. «Փորձնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման գործառույթներն ապահովող մի շարք իրավական ակտերում ժամկետային փոփոխություններ կատարելու մասին հարցը:

/Չեկուցող` Գ.Նշանյան/

2. «Վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից էլեկտրոնային փոստով վիճակագրական փաստաթղթերի Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն ներկայացման կարգը և համաձայնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» հարցը:

/Չեկուցող` Լ. Պետրոսյան/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղման հաշվետվության մասին.

3.1. Հաղորդում Գերմանիայի Ռ-նստոկ քաղաքի Մաքս Պլանկի ժողովրդագրական հետազոտությունների ինստիտուտում տեղի ունեցած (2010 թվականի մարտի 18-ից-19-ը) «Մահացության պատճառների Եվրոպական համապատասխանություն և անհամապատասխանություն (EDICCOD), ծրագրի առաջին արդյունքները» թեմայով սեմինարի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

/Չեկուցող` Կ. Կույունջյան/

3.2. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 26.04-30.04.2010թ. տեղի ունեցած ՍԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի կողմից կազմակերպված «Գլոբալիզացիայի ազդեցությունը Ազգային հաշիվներում» թեմայով հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Չեկուցող` Ա. Շաբոյան/

3.3. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 03-04 մայիսի 2010թ. տեղի ունեցած ՍԱԿ-ի վիճակագրության բաժնի և ԵՏՀ Բնապահպանական քաղաքականության կոմիտեի ու Վիճակագրության բաժնի կողմից համատեղ կազմակերպված «Էկոլոգիական ցուցանիշների ներդրմանն ու օգտագործմանը նվիրված Եվրոմիության, Արևելյան Եվրոպայի և Կովկասի, Միջին Ասիայի» բնապահպանների և վիճակագիրների միասնական խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Չեկուցող` Յու. Պողոսյան/

4. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ` 6, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. «Փորձնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման գործառույթներն ապահովող մի շարք իրավական ակտերում ժամկետային փոփոխություններ կատարելու մասին հարցը:

/Չեկուցող` Գ.Նշանյան/

Որոշեցին՝

հաստատել «Փորձնական մարդահամարի նախապատրաստման և անցկացման գործառույթներն ապահովող մի շարք իրավական ակտերում կատարված ժամկետային փոփոխությունները»:

/Նորմատիվ/ , /Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ` 6, դեմ` 0, ձեռնպահ` 0/